ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի հուլիսի 17-ից 20-ը
Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Ֆելիքս Մելքոնյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության Եվրասիական տնտեսական միության օրենսդրության մեթոդական ապահովման բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, ս.թ. հուլիսի 17-ից 20-ը

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների փորձագետների նիստի անցկացման նպատակը հետևյալ համաձայնագրերի նախագծերի քննարկումն էր՝

1) Եվրասիական տնտեսական միության շրջանակներում մաքսային տարանցման միասնական համակարգի մասին համաձայնագրի նախագծի տեքստը և նախագծի վերաբերյալ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից ստացված առաջարկները.

2) Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետությունների միջև կնքվող՝ մաքսային տարանցման միասնական համակարգին միանալու մասին համաձայնագրի նախագիծը, մասնավորապես, համաձայնագրում ներառման ենթակա հարցերը, համաձայնագրի հավելվածները, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից և Եվրասիական տնտեսական հանձնաժողովից ստացված առաջարկները:

6. Քննարկված թեմաները՝

Փորձագիտական խմբի նիստի ընթացքում քննարկվել են մասնավորապես Եվրասիական տնտեսական միության շրջանակներում մաքսային տարանցման միասնական համակարգի բովանդակությունը, համակարգի գործողության պայմաններն ու կարգը, համակարգի գործարկման նպատակները, մաքսային տարանցման միասնական համակարգի գործողության շրջանակները, մաքսային տարանցման միասնական համակարգի կիրառման սկզբունքները (մասնավորապես՝ միասնական տարանցման հայտարարագրի կիրառություն, մաքսային վճարների գծով պարտավորությունների կատարման ընդհանուր ապահովման կիրառություն, Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող և մաքսային տարանցման միասնական համակարգին միացած պետությունների լիազորված տնտեսական օպերատորների համար առանձին պարզեցված ընթավակարգերի՝ փոխադարձության սկզբունքով կիրառություն, փոխադրման ընթացքում էլեկտրոնային տեղորոշման կնիքների կիրառություն), Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետությունների՝ մաքսային տարանցման միասնական համակարգին միանալու պայմանները, տարանցման հայտարարագրի ներկայացման պայմանները, ձևաչափը, հայտարարագրում ներառվող տեղեկությունների կազմը, մաքսային տարանցման պայմանները, էլեկտրոնային տեղորոշման կնիքների կիրառման պայմանները, փոխադրողների պարտավորությունները, փոխադրման համար օգտագործվող տրանսպորտային միջոցներին ներկայացվող պահանջները, փոխադրման երթուղու սահմանման պայմանները, մաքսային վճարների գծով պարտավորությունների կատարման ապահովման տրամադրման դեպքերն ու պայմանները, մաքսային տարանցման ավարտին առնչվող կարգավորումները, լիազորված տնտեսական օպերատորներին փոխադարձության սկզբունքով պարզեցումների տրամադրման կարգը, մաքսային տարանցման միասնական համակարգին միացող պետությունների և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև համագործակցության կարգն ու պայմանները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպումները տեղի են ունեցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հարթակում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համապատասխան պաշտոնատար անձանց և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում ներկայացվել են քննարկվող վերը նշված հարցերի

վերաբերյալ համապատասխան առաջարկներ, դիրքորոշումներ, պարզաբանումներ, ինչի հիման վրա մշակվել է վերը նշված համաձայնագրերի նախագծերի տեքստը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Փորձագիտական խմբի նիստի արդյունքներով մշակվել են Եվրասիական տնտեսական միության շրջանակներում մաքսային տարանցման միասնական համակարգի մասին համաձայնագրի նախագիծը և տվյալ համաձայնագրին միանալու մասին համաձայնագրի նախագիծը (ընդհանուր մոտեցումները, որոնք հետագայում պետք է ընդունվեն երրորդ երկրների կողմից): Փորձագիտական խմբի նիստի ավարտին ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ համաձայնագրերի նախագծերը ներկայացնել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կառավարություններին՝ բոլոր շահագրգիռ պետական մարմինների և այլ գերատեսչությունների կողմից դիրքորոշումների ձևավորման նպատակով, որից հետո հաջորդ քննարկումները նախատեսվում է անցկացնել բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավմամբ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Համաձայնագրերի նախագծերի քննարկման նպատակով հաջորդ խորհրդակցությունները նախատեսվել է անցկացնել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների շահագրգիռ պետական մարմինների և այլ գերատեսչությունների կողմից դիրքորոշումների ձևավորումից և ներկայացումից հետո: Նախագծերի ընդունման արդյունքում ակնկալվում է Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետությունների հետ տարանցման ընթացակարգերի և գործառնությունների պարզեցում, միասնական մոտեցումների և սկզբունքների կիրառություն, երրորդ երկրների հետ ընդհանուր տարանցման համակարգի առկայություն:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

22.07.2022թ